

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2009 թ. փետրվարի 20-ին ժամը 10-ին կայացած «ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի նիստի

ք.Երևան

20.02.2009թ.

*Մասնակցում էին խորհրդի անդամներ`*

Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Մ. Վարդանյան	ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Ե. Զախարյան	Երևանի քաղաքապետ
Ա. Քոչարյան	ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Ղուլարյան	ՀՀ Տավուշի մարզպետ
Կ. Շահգալդյան	ՀՀ Կոտայքի մարզպետ
Ն. Պողոսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Գ. Գյոզալյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Մ. Մաթևոսյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Զ. Բալայան	գրող, ՀՀ գրողների միության անդամ
Հ. Սանասարյան	« Հայաստանի կանաչների միություն» ՀԿ-ի նախագահ
Կ. Դանիելյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

*Հրավիրված էին`*

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Մովսիսյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Վ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

Լ. Գրիգորյան

ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի  
գլխավոր հաշվապահ

## Օրակարգ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2008 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

---

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Որոշվեց՝ Հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2008թ. հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին (կցվում է).

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2008թ. ֆինանսական հաշվետվության մասին:

---

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Որոշվեց՝ Հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2008թ. ֆինանսական հաշվետվությունը (կցվում է).

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին:

---

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Որոշվեց՝ Հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. գործադիր մարմնի ապարատի հաստիքացուցակը և պահպանման (վարչակառավարչական) ծախսերի նախահաշիվը՝ 22197,25 հազար դրամ գումարով (կցվում է).

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին՝

---

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

«Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (2-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 15 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման մասին.

Որոշվեց՝ 1. Հաստատել «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (2-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 15 հեկտարի վրա ոռոգման ցանցի

վերակառուցման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 33,9 մլն. դրամ արժեքով:

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» 2009թ. ծրագրի 2-րդ փուլի՝ 15 հեկտարի վրա, ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարար Ա. Գրիգորյանին՝ 15-օրյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության հետ քննարկել և ներկայացնել առաջարկություն սույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված ծախսերի ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ:

## 5. Այլ հարցեր

-----

1. Առաջարկել «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ տկն Վ. Դանիելյանին՝

1) «ԹԴԻ ՓԲՈՋԵԲԹ» կազմակերպության հետ համատեղ ներկայացնել վերլուծական տեղեկատվություն անտառների ապօրինի հատումների մասին.

2) ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանի հետ կատարել շրջայց հանրապետության տարածքում գտնվող անտառտնտեսություններով, ուսումնասիրել և գնահատել կատարված աշխատանքներն ու զանգվածային լրատվության միջոցներով դրանց մասին իրազեկել հանրությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

